«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» 02 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-05/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.01.2014թ. N 13.1/751-14 գրությամբ ներկայացված «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03018767) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.01.2014թ. N 13.1/751-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության

դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար, միաժամանակ ներկայացնելով ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.01.2014թ. ՀՍ/1433-13 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն 24.01.2014թ. հայցով դիմել է դատարան՝ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից Ընկերության հետ 01.10.2013թ. կնքված «ԲԸԱՇՁԲ-13/16-7» ծածկագրով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման պայմանագիրը միակողմանի լուծելու որոշումը չեղյալ համարելու պահանջով, Կենտրոնը 23.04.2014թ. N04/032-727 և 06.06.2014թ. N 04/032-1022 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով վերջինիս հանձնարարականը Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրության հետագա ընթացքի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.08.2014թ. N 73-1/[645138]-14 գրությամբ Կենտրոնին հանձնարարել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել գործի հետագա ընթացքը գնումների բողոքարկման խորհրդում:

2. «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 29.01.2014թ. N 09/032-84 գրությամբ դիմել է «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին:

Ընկերությունը Կենտրոնին հասցեագրված 04.02.2014թ. N-002 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի դպրոցի վերակառուցման

նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ նաև՝ Աշխատանք) «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և Ընկերության միջև 01.10.2013թ. կնքված ԲԸԱՇՁԲ-13/16-7 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) միակողմանի լուծելու Պատվիրատուի գործողություններն իրավաչափ չեն:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը 24.01.2014թ. հայցով դիմել է դատարան՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ որոշումը չեղյալ համարելու պահանջով, խնդրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցը հետաձգել մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Ընկերությունը 04.02.2014թ. N 002 գրությանը կից ներկայացրել է ՀՀ վարչական դատարան մուտքագրված դիմումի պատճենը:

Կենտրոնում 24.11.2014թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-05/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստին Ընկերության տնօրենը հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների էսքիզային նախագիծը ներկայացրել է պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան, պարզապես Պատվիրատուն տարբեր պատճառաբանություններով մշտապես չի ընդունել աշխատանքը, այնուհետև՝ միակողմանի լուծել է պայմանագիրը:

<u>3. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 12.03.2014թ. N 04/032-443 գրությամբ դիմել է «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

«Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 20.03.2014թ. N ՀՍ/1-173-14 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության կարծիքն անհիմն է, քանի որ ներկայացված չէ որևէ ապացույց, ինչը կբացառեր Պատվիրատուի կողմից Պայմանագրի լուծման իրավաչափությունը: Բացի այդ, «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի հետ

կնքված Պայմանագրի լուծման վերաբերյալ վեճը ներկայումս քննվում է դատարանի կողմից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-05/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 24.11.2014թ. ժամը 16:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

4. ՍՑ-ԳԲԽ-05/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 22.01.2014թ. N 13.1/751-14 գրությամբ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի և «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի միջև 01.10.2013թ. կնքվել է «ԲԸԱՇՁԲ-13/16-7» ծածկագրով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պայմանագիր:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների էսքիզային նախագիծը ներկայացնելու համար վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 30-րդ օրացուցային օրը՝ 31.10.2013թ., ինչն Ընկերության կողմից խախտվել է:

3. 11.11.2013թ. N ՀՍ/1220-13 գրությամբ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն Ընկերությանն առաջարկել է ապահովել պայմանագրով նախատեսված ժամկետների պահպանումը, այլապես կկիրառվեն պայմանագրով նախատեսված պատժամիջոցները:

4. Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտմամբ՝ 27.11.2013թ., ներկայացրել է վերակառուցվող դպրոցի նախագծի ճարտարապետական մասի էսքիզային տարբերակը, սակայն Պատվիրատուի կողմից այն չի

ընդունվել՝ ոչ պատշաճ կատարման հիմքով և նույն օրը կազմված արձանագրությամբ Ընկերությանը առաջարկվել է ներգրավել նախագծային աշխատանքներում բարձրակարգ ճարտարապետների, կոնստրուկտորների և 10-օրյա ժամկետում ներկայացնել նախագծային առաջադրանքին համապատասխան նոր էսքիզային տարբերակ:

5. 11.12.2013թ. «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն Պատվիրատուին ներկայացրել է դպրոցի վերանախագծման ճարտարապետական մասի նոր էսքիզային գծագրերը, սակայն վերջինիս նույն օրը կազմված արձանագրությամբ Ընկերությանն առաջարկել է վերանայել մասնաշենքերի ճակատների ձևավորումն ու հատակագծային լուծումները և առաջարկել է հիմնավորել վերանախագծվող դպրոցի սեյսմազինվածությունը բարձրացնելու նպատակով Ընկերության կոնստրուկտորի կողմից ներկայացված ուժեղացման տարբերակի լուծումները կամ առաջարկել այլ լուծումներ:

6. Ընկերությունը 17.12.2013թ. Պատվիրատուին ներկայացրել է դպրոցի վերակառուցման կոնստրուկտորական մասի առաջարկվող կոնստրուկտիվ լուծումները, սակայն, նկատի ունենալով, որ կոնստրուկտիվ համակարգի ճկունության վերաբերյալ առաջարկվող լուծումները Պատվիրատուի մոտ հարուցել են կասկածներ, վերջինիս կողմից նույն օրը որոշում է կայացվել Ընկերության ներկայացրած նախագծի կոնստրուկտորական հաշվարկները տրամադրել հանձնաժողովի նիստին հրավիրված կոնստրուկտորներ Գ. Ազիզյանին և Գ. Վարդանյանին՝ դրանք ստուգելու և արդյունքներն երկօրյա ժամկետում ներկայացնելու Պատվիրատուին՝ վերջնական որոշում կայացնելու համար:

7. «Հայնախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն Գ. Ազիզյանի և գլխավոր մասնագետ՝ Գ. Վարդանյանի կողմից 19.12.2013թ. տրվել է եզրակացություն այն մասին, որ շենքի սեյսմազինվածության ընդունված տարբերակը չի ապահովում ՀՀՇՆ II-6.02.2006-ի բոլոր պահանջների կատարումը և անհրաժեշտ է սեյսմազինվածության բարձրացման այլ եղանակ, որը նախատեսում է անհրաժեշտ քանակությամբ կոշտության դիաֆրագմաների տեղադրումը շենքի երկու ուղղություններով:

8. Պատվիրատուն, նկատի ունենալով, որ Ընկերության կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի հավելված N 1 տեխնիկական

բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին և այն, որ Ընկերության կողմից խախտվել է նշված հավելվածով սահմանված աշխատանքի կատարման ժամկետը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին հասցեագրված 25.12.2013թ. N ՀՍ/1433-13 գրությամբ Պայմանագիրը միակողմանի լուծել է:

9. Պայմանագրի լուծման արդյունքում «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկված Պայմանագրի կատարման ապահովման համար նախատեսված 700.200 (յոթ հարյուր հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով տուժանքը և Պայմանագրի 5.2 կետով նախատեսված 35.010 (երեսունհինգ հազար տաս) ՀՀ դրամի չափով տուգանքն Ընկերության կողմից վերականգնվել է, ինչի վերաբերյալ Կենտրոն է ներկայացվել նշված գումարների վճարումը հավաստող 14.02.2014թ. N 140214038007027-02 և 16.01.2015թ. N 150116058609027 վճարման հանձնարարագրերի պատճենները:

5. ՍՑ-ԳԲԽ-05/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնումների բազային միավորը մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ է:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքները կատարվում են սույն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում նույն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

Նկատի ունենալով, որ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, մասնավորապես, կատարված Աշխատանքը չի համապատասխանել Պայմանագրի հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված

պահանջներին, ինչպես նաև խախտել է Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման համար սահմանված 30-օրյա ժամկետը, որոնք հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում ենք, որ առկա են համապատասխան հիմքեր Ընկերությանը Ցուցակում ընդգրկելու համար:

Հաշվի առնելով, որ պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով նախատեսված տուժանքի և հաշվարկված տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը հաշվարկված տուգանքը և տուժանքը վերականգնվել է, առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 22.01.2014թ. N 13.1/751-14 գրությամբ «Ճարտարապետ Է. Հովսեփյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03018767) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-05 /14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան